«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հեթանոսական գրական շարժումը՝ որպես ազգի միասնության և վերազարթոնքի ճանապարհ
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Ղազարյան Մարիամ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Սևանի N4 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..…….…… 2

Մաս 1: Հեթանոսական գրական

շարժման

նշանակությունը....... 3

Մաս 2: Հեթանոսական գրականության ընդհանուր

Մոտիվները.....……..……..... 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….……..... 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեթանոսական գրական շարժումը հայ գրականության պատմության մեջ կարևորագույն մի երևույթ է, որը չնայած բավականին ուսումնասիրվել է, սակայն շնորհիվ լայն ընդգրկումների, դեռևս տարբեր տեսանկյուններից ուսումնասիրման նյութ կարող է դառնալ:

Չնայած կոնկրետ ժամանակաշրջանում է ձևավորվել գրական հեթանոսությունը, սակայն գաղափարական ընդգրկումով և ժողովրդին ուղղված կոչերով այն չի կորցնում արդիականությունը: Ինչպես նկատում է Հր. Թամրազյանը. «Հայկական հողի վրա ծնված հեթանոսության այս թեման ուներ հարատև արժեք, քանի որ կատարյալի ձգտումը՝ նոր երանգներով և գեղեցկություններով, նոր ուժով երևան է գալիս յուրաքանչյուր նոր դարաշրջանում և յուրաքանչյուր նոր սերնդի հոգեբանության մեջ[1]»:

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ հեթանոսական գրական շարժման դերը ազգի միասնության և վերազարթոնքի գործում, բացահայտել շարժման ներկայացուցիչների կողմից ստեղծված գրականության ընդհանուր այն գծերը, որոնք ուղղված էին ազգի վերազարթոնքին ու միասնությանը:

[1] Հր. Թամրազյան, Պոեզիան պատմության քառուղիներում, Եր., 1971, էջ 61:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Մաս 1

Հեթանոսական գրական շարժման նշանակությունը

19-րդ դարում պատմական իրադարձությունները նպաստեցին հեթանոսական գրական շարժման առաջացմանը: Թուրքական տիրապետության տակ հայերի ճնշումներին արձագանք կարելի է համարել այս շարժումը: Համատարած ճնշումների հետևանքով առաջացած խեղճությունը պետք էր հաղթահարել: Իսկ հայ մտավորականների զենքը դարձավ իրենց գրիչը: Ինչպես նկատում է Ս. Դանիելյանը. «Ազատագրական կռիվների կազմակերպման խնդիրը դարձավ հեթանոսականների գրական մուտքի շարժառիթներից մեկը: Ոգեզինման, պայքարի հեթանոսական թեզը առաջադրվում է իբրև ուրույն կոնցեպցիա»[2]

Այսպիսով, արևմտահայ մտավորականները հեթանոսությունը ընկալեցին որպես հայոց համազգային վերազարթոնքի ուղի:

Խորհրդային տարիներին գրականագետները հասկանալի պատճառներով հեթանոսական շարժմանը հաճախ առաջնահերթ վերագրում էին համամարդկային բնույթ: Օրինակ Հր. Թամրազյանը գրում է. «Հեթանոսության թեման, արտաքին հեռավորությամբ հանդերձ, ներքնապես ստանում է արդիական շեշտեր և սոցիալական բնույթ, դառնում հարազատ 20-րդ դարի համաշխարհային պոեզիայի մարդասիրական միտումներին[3]»:

Իհարկե այս գիծը նկատելի է, սակայն չի կարելի չափազանցնել դրա դրսևորումը: Շարժման հիմնական և բուն նպատակները ազգային են եղել, բխել են ազգային շահերից, ուստի շարժմանը զուտ սոցիալական կամ համամարդկային խնդիրների լուծմանը ուղղված համարելը արհեստական փորձ է որոշ գրականագետների կողմից:

---

[2]Դանիելյան Ս., Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Եր., 1988, էջ 29:
[3]Հրանտ Թամրազյան, Պոեզիան պատմության քառուղիներում, Եր. 1971, էջ 121

Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Դանիելյանը. «Ազատագրական կոնկրետ նպատակասլացությամբ է հագեցած հեթանոս անդրադարձը՝ բոցավառել յուրաքանչյուր հայի մեջ ազգային արժանապատվության կոնկրետ կրակներ, մղել նրան քաղաքական ինքնուրույնության ըմբռնման[4]»:

Չնայած ոչ միանշանակ ընդունմանը, արևմտահայ հասարակության մեջ հիմնականում ողջունում էին հեթանոսական շարժման ծավալումը: «Արևմտահայ մամուլը ջերմության, համակրանքի մթնոլորտ էր ստեղծում հեթանոսական շարժման շուրջ: Շատ պարբերականներ տպագրում էին հեթանոսաշունչ ստեղծագործություններ, որոնցով փորձում էին իրենց մասնակցությունը բերել ընդհանուր գործին: Այսպես, 1913-ից Վանում լույս տեսնող «Վան-Տոսպ» շաբաթաթերթը ողջունում էր գրական նոր զարթոնքը, համակիր էր տիրող մթնոլորտին [5]»: Իսկ սա ապացուցում է, որ հեթանոսականները կարողացան հասնել գոնե որոշակի նպատակների, իրենց կողմը գրավել հասարակական լայն զանգվածների և իրենց շուրջը համախմբել ժողովրդի՝ պայքարել ցանկացող շերտերին:

Այլ էր արևելահայ մտավորականության վերաբերմունքը հեթանոսական շարժման հանդեպ: Մի շարք պարբերականներ, մտավորականներ հեթանոսական շարժումը փնովում էին, հատկապես հեթանոսականների ազատությունը կնոջ նկարագրություններում դարձավ քննադատության առարկա: Սակայն սա պատահական չէր: Նախ՝ այլ էին միջավայրերը, գրական ազդեցությունների ոլորտները և հետո՝ ազգի տարանջատված հատվածները լավ չգիտեին միմյանց խնդիրները, կարիքները և հետևաբար դրանց լուծման ուղիները: Հեթանոսական շարժման նպատակներից մեկն էլ հենց այդ անջրպետված հատվածների միասնականացումն էր:

Համազգային արթնացման, հասարակությանը իրենց կողմը գրավելու համար հեթանոսականները հրատարակեցին «Նավասարդ» և «Մեհյան» հանդեսները, որոնց «գործունեությունը փաստեց այն մասին, որ հեթանոսական ոգեկոչությունը Դ. Վարուժանի, Լ. Շանթի, Սիամանթոյի, Վ. Թեքեյանի, Հ. Սիրունու ստեղծագործություններում պատեհ հանգամանքների միագումար չէր, այլ ազգային երազի, փայփայած քաղաքական նկրտումների և գեղագիտական հայացքերի մի ընդհանրություն»[6]:

---

[4] Դանիելյան Ս., Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Եր., 1988, էջ 40:

[5] Նույն, էջ 45:

[6] Դանիելյան Ս., Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Եր., 1988, էջ 29:

«Մեհյան» հանդեսը լույս տեսավ 1914 թվականին: Հանդեսին աշխատակցել են Դանիել Վարուժանը, Վահան Թեքեյանը, Հակոբ Սիրունին, Լևոն Էսաճանյանը, Ռ. Շիշմանյանը և ուրիշներ: Նրանց առաջնահերթ նպատակը ազգային գրականության արարումն էր, ինչպես իրենք են նշում. «Ամէն ճշմարիտ արուեստագէտ՝ իր ցեղին հոգին միայն կարտայայտէ»:

Մեհենականները փորձում էին բարձրացնել գրականության դերը Ժողովրդի բարոյական նկարագրի ձևավորման գործում, նպաստել հայ ժողովրդի տարանջատված հատվածների հոգևոր միասնությանը: «Մեհյանի» հանգանակում նրանք նշում են, որ «Արտաքին գործօններ-ստացական սովորութիւններ, օտարոտի ազեցութիւններ, զգացմանց խոտորում եւ ձեւազեղծում, տիրած են Հայ Հոգին, բայց չեն կրցած ձուլել զԱյն»[7]: Ազգային ուղղվածությունը միտված էր նաև լեզվի մաքրության պահպանմանը. «Հռչակելով մաքրագործումը հայ լեզուին՝ բազմաթիւ օտարահունչ բառերէ, կ'որոշենք դիմել հայ լեզուին զանազան աղբիւրներուն, գրաբարին եւ բնաշխարհի հայ բարբառին եւ որդեգրել հարազատ ու հայեցի բառերը, բացատրութիւններն ու ասութիւնները եւ պատուաստել զանոնք մեր գրական լեզուին, առանց մեղանչելու անոր ներդաշնակութեան օրէնքներուն դէմ»:

Արվեստի մաքրագործմանն է ուղղված հետևալ կետը. «Կը յայտարարենք զուտ գրականութիւնը հեռու պահել քաղաքականութենէ եւ լրագրութենէ, որովհետեւ երկու վտանգներ են անոնք, լրագրութիւնը եւ քաղաքականութիւնը, որ մեր օրերուն դարանակալ կը սպասեն հայ արուեստին շուրջ»:

Այս դրույթի ձևակերպումը առերևույթ մտածել է տալիս, թե իրոք մեհենականները փորձում են քաղաքականությունից անջրպետել գրականությունը: Ուստի գրականագետ Ս. Դանիելյանը այդպես էլ հետևյալ կերպ է մեկնաբանում այս դրույթը. «Մեհենականները, սիմվոլիստների հետևողականությամբ, մերժում էին արվեստի հասարակական դերը: Նրանք փորձում էին «տեղավորվել» ապաքաղաքական դիրքորոշման իրենց ստեղծած տարբերակներում, սակայն ակամա երևան էին հանում «նոր Արշալույսին» հասնելու ուղիների անընմբռնողություն: Որոնումները չէին ուրվագծվում, զուրկ էին դիմորոշոլթյունից և ներկայացնում էին մի տեսակ քաղաքական խնդիրներից փախուստի արտահայտություն»:

[7] https://groghutsav.am/2022/04/21/%D5%B4%D5%A5%D5%B0%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BD-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8/

Սակայն չնայած այս ձևակերպումներին, գրականագետը հենց ինքն էլ նշում է այս դրույթի առաջադրման բուն պատճառը. «Կար խնդրի և մյուս կողմը, գրաքննության պայմաններում անհնարին էր խոսել քաղաքական որոշակի նպատակասլացությամբ»: Իհարկե տվյալ ժամանակահատվածում արևմտահայ մտավորականությունը պիտի փորձեր խուսափել նպատակների բացահայտ ցուցադրումից[8]»: Եվ ինչին պիտի ուղղված լիներ ազգի հերոսականության բարձրացումը հեթանոսության միջոցով եթե ոչ նաև ակնհայտ քաղաքական խնդիրների լուծմանը:

Այն ժամանակ, երբ ճնշումների պայմաններում սերունդների մեջ զգալի էր հոգեկան անկումը, ընկճվածությունը, խեղճությունը, արևմտահայ բանաստեղծները «ինչ-որ չափով հասարակական պարտք էին կատարում գալիքի առաջ, սերունդներին ներարկելով արիության ոգի: Հեթանոսական թեման՝ ժողովրդական տարերքի գեղեցկությունների խոր ընդգծումով, գեղեցիկ մարմնի և ոգու խոր պաշտամունքով, արդիականության որոշ երանգավորումներով, դրամատիրական հասարակության քննադատությամբ հետապնդում էր ազգային-քաղաքական լուրջ նպատակ, սերունդներին հաղորդելով կենսական գրգիռներ, ապրելու և պայքարելու եռանդ...[9]» :

Այս գաղափարները պետք էր սերմանել դեռևս պատանեկան հասակից: Այսպես, շարժման վառ ներկայացուցիչ Դանիել Վարուժանը՝ որպես ուսուցիչ, աշակերտների մեջ սերմանում էր սեր դեպի գիրն ու գրականությունը, ընթերցանությունը, նրանց համար կարդում էր իր բանաստեղծություններից, դաստիարակում նրանց մեջ հայրենասիրություն՝ այսպիսով նոր սերնդին ևս սնելով նոր գաղափարներով: Վարուժանի նվիրումը մանկավարժությանը, դպրոցին թելադրված էր նրա հիմնական ձգտումից՝ պատանեկան հասակից մարդկանց նախապատրաստել արդարության և գեղեցիկի համար մղվող պայքարին: Նա «չափազանց մոտիկ փոխհարաբերություններ հաստատեց յուր աշակերտների բազմության հետ և դարձավ նրանց հոգևոր դայակը[10] »:

Վարուժանը լայն սեր ու հարգանք էր վայելում նաև ժողովրդի շրջանում և իր գաղափարները փորձում էր տարածել նաև հռետորությամբ: Օրինակ՝ «Թոքատում Վարուժանի բեմախոսության մասին լուրի մեջ հոդվածագիրը վերաշարադրել է բանաստեղծի խոսքերը. Հերիք, ըսավ, ապրեցանք դարեր տևող թմրության մեջ,

[8] Դանիելյան, Ս., «Մեհյան» հանդեսի գրական հավատամքը Լրաբեր, 1980, էջ 17:
[9]Թամրազյան Հր., Պոեզիան պատմության քառուղիներում, Եր, 1971, էջ 28:

[10] Սարգսյան Գր., Վարուժանի ստեղծագործական կյանքը, Եր., 1947, էջ 26:

ապրինք կյանք մը ասպետական, որով ապրեցան մեր նախահայրերը իրենց բնագավառին մեջ[11]»:

Ցավոք, հեթանոսական շարժումը չհասցրեց ծավալվել և տալ իր դրական պտուղները: Եղեռնի զոհ դարձան նաև շարժման մի շարք ներկայացուցիչներ: «Մեհյան» հանդեսը լույս տեսավ 7 համար, իսկ Նավասարդը ընդամենը մեկ համար (2-րդ գրքի շարվածքը ոչնչացվեց Մեծ եղեռնի ժամանակ):

[11] Գաբրիելյան Վ., Դանիել Վարուժան, Եր., 1978, էջ 240:

Մաս 2

Հեթանոսական գրականության ընդհանուր մոտիվները

Հեթանոսական գրական շարժմանը հարող բանաստեղծները անցյալի պատկերներով փորձում էին մարդկանց մեջ արթնացնել հայրենիքի ոգին, ներկայի թմրած ողջերին զարթնեցնել, պարսավել նրանց, ովքեր տանում են անարգանքը: Հեթանոսությունը խորհրդանշում էր ուժը, խիզախումը, ազատությունը: Հենց այս հատկանիշները պետք էր ներարկել ազգային գիտակցության մեջ:

Հեթանոսական գրական շարժումը արթնացման կոչ էր անում ազգին, համախմբվելու և ոտքի կանգնելու: Այսպես, Վահան Թեքեյանը «Ըմբոստություն սրբազան» բանաստեղծության մեջ ըմբոստության կոչ է անում.

Դուն մնացիր, բնակե՛

Մեր մտքերուն մեջ հիմա,

Ըմբոստություն սրբազան[12]

Մեկ այլ բանաստեղծության մեջ պայքարող հերոսը մյուսներին իրեն միանալու կոչ է անում.

Արի տղան շարունակվող հին կռվին

Նոր հոգիներ, նոր մարտիկներ կկանչե

Ու պիտի տա՛ մինչև իր շունչը վերջին,

Որպեսզի ձայնն ամեն անկյուն թափանցե...[13]

«Հայրենի հրավերում» Սիամանթոն բերում է հայերի միասնության և հավաքական ուժի գաղափարը՝ որպես փրկության միջոց: «Դեռ դարասկզբին, արհավիրքից ցնցված, նա հենց հողի ձայնով էր փորձում միավորել ցաքուցրիվ ազգային ուժերը, դարձնել այն

[12] Թեքեյան Վ., Հատընտիր, Եր., 1970, էջ 115;
[13] Նույն, էջ 95:

պայքարող, դիմադրող կենսամիջոց [14]»: Եվ ահա հայրենի հողը վերադարձի կոչ է անում բոլոր պանդուխտներին.

Վերադարձի՛ր մեր պարտեզին պտուղներուն պես անուշ,

Սրտիս սերը քեզի համար իր համբույրը կը պահե:

Ա՜հ իմ կաթնաթույր կողերս դեռ մայրություն չի ճանչցան...

1910-ական թվականներին Դ. Վարուժանը հեթանոսական շարժման ճանաչված առաջնորդն էր: Դեռևս Գենտում սովորելու տարիներին Դ. Վարուժանը նամակներից մեկում գրում է. «Հեթանոս կյանքը օրեօր զիս կը գրավե. Եթե այսօր կարելի ըլլար, կրոնքս կը փոխի սիրով կ'ընդգրկեի բանաստեղծական հեթանոսությունը[15]»:

Հեթանոսական շարժման ամենաբնորոշ գործը դարձավ Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» շարքը, որում հեղինակը իր առջև նպատակ չի դրել տալ հեթանոսական դարաշրջանի համակողմանի պատկերը: Հետևաբար հեթանոսությունը պատկերել է ոչ իր բուն էությամբ, այլ ընտրովի հատկանիշներով: Ինչպես նկատում է Պ. Սևակը. «Հեթանոս երգերը» ոչ այլ ինչ են, քան հայ ժողովրդի ճակատագրի և ցանկալի ապագայի դիտումը հեռավոր անցյալից[16]»:

Դանիել Վարուժանի համար հեթանոսականը առաջին հերթին հերոսականն է: Նրա հերոսները ուժեղ են, մարտնչող: Նրանց պայքարը ազնիվ է: Վարուժանը փառաբանում է նաև հեթանոս աստվածներին, որոնց մեջ գտնում է իր համար ցանկալի հատկանիշները, որոնք պետք է ներարկել հասարակության մեջ:

Ըստ Պարույր Սևակի՝ հեթանոս դարերին հակվելը Դ. Վարուժանի համար «ոչ այլ ինչ է, քան համատարած ցավի ծանր և հոգեմաշ ապրումներից հետո, կամ նրանցից առաջ, հաղորդակից լինել նաև հաճույքներին, թեկուզ և նրանք անիրական, անշոշափելի լինեն, բայց հագուրդ պատճառող և կենարար, ոչ այլ ինչ, քան համատարած գազանություններից, մարդկային ահավորություններից, անհայրենիք մարդու, թշվառի, ընկածի ծանր վիճակից Զորավոր ու Գեղեցիկ, վսեմ ու մաքուր, կայուն հայրենի հողի վրա ընկնելը[17]»:

---

[14] Սրապիոնյան Ս, հրավերքի երգն ու մաքառման խորհուրդը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (65), Երևան 1988թ, էջ 170:
[15] Դ. Վարուժան, Նամականի, էջ 128:

[16] Սևակ Պ., Երկերի ժողովածու, հատոր 3, Եր., 1983 506
[17] Նույն, էջ 515:

Վարուժանը պատկերում է կնոջը՝ որպես գեղեցիի դրսևորում, հանուն որի արժի նաև պայքար մղել: Ինչպես նշում է Պ. Սևակը. «Կնոջ մարմնական սիրո, նրա իբրև ստեղծագործ ուժի, իբրև կյանքի և հաճույքի կուլտը՝ կապված «հեթանոս աստվածների» ներբողմանը,- ահա «հեթանոս երգեր» բաժնի գլխավոր մոտիվը[18]»:

Այս առումով հատկանշական է «Հեթանոս երգերը» շարքում ներառված «Հարճը» պոեմը, որում պայքարը հզոր հերոսների միջև ծավալվում է գեղեցիկի համար: Հարճը՝ որպես Աստղիկ աստվածուհու մարմինը, սերը ունեցող երկրային գեղեցկուհի է ներկայացվում: Նազենիկը հաճախ համեմատվում է աղավնու հետ, որը Աստղիկի խորհրդանիշ թռչունն է և Նազենիկն ինքը Աստղիկի աղավնիներից է: Աղավնիների հետ համեմատելը խորհրդանշում է նաև Նազենիկի մաքրությունը, անբիծությունը: Սրանով մեղմացվում է Նազենիկին որպես հարճ գիտակցելը, հիշենք նաև, որ նրան երկար մազերի վերագրումով ևս հեղինակը նույն խնդիրն է լուծում: Պատահական չէ, որ Վարուժանը նախնապես <<Վարձակ>> վերնագիրը վերանվանել է <<Հարճը>>, որով ավելի է մեղմել բառի իմաստը: Երբ հայտնվում է Նազենիկը, նրան այնպես են դիմավորում, ինչպես կմեծարեին Աստղիկ աստվածուհուն: Այս հատվածում անգամ նրան են վերագրվում Աստղիկի խորհրդանիշ աղավնիները.

«Վարձա՛կն ահա, տեղ բացեք, վարձա՛կը, վարդ տեղացեք.
Մազերուն մեջ, ոտքին տակ մարգարիտինե՛ր լեցուցեք» :
Սանդուխներեն վերնատան վար կ'իջներ կին մը խաժակ.
Կը թըռվռային գըլխուն շուրջ աղավնիներ ըսպիտակ:

Այսինքն հեղինակը բարոյականության չափանիշներով չի առաջնորդվում, այլ ուղղակի հեթանոսության պաշտամունքի առարկա է դիտարկում Նազենիկին՝ որպես սիրո, վայելքի, գեղեցիկի խորհրդանիշի:

«Հեթանոս երգեր» շարքը բացող «Գեղեցկության արձանին» բանաստեղծությունը, ըստ Խ. Վարդանյանի, ունի հավատամքային արժեք, «բացատրում է բանաստեղծական հեթանոսությունը, ընդգծում շարքի համար առանցքային այն միտքը, թե գեղեցիկը կյանքի բնագեղ ընկալումն է, կյանքն իր իսկության մեջ տեսնելը: Քերթվածն արտահայտում է հավերժ դյութող գեղեցիկի՝ կյանքի գաղափարը՝ լույս ու ավյուն ճառագող իր գրավչությամբ, միշտ գրավիչ ու անհաս» .

[18]Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հատոր 6, 1976, էջ 510:

Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարգև, Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթվիլ՝ Որպեսզի կուճդ ըմպե արյանս հուսկ կաթիլ:

Լ. Շանթի «Հին աստվածներ» պոեմում առանձնահատուկ տեղ ունի ծովը, որը որպես ջրի խորհրդանիշ, առաջին հերթին գիտակցվում է որպես կանացի նախասկիզբ: Այս երևույթի արտահայտությունը գտնում ենք անգամ հեղինակային նկարագրություններում. <<Ալիքները, որոնք կնոջ մարմին ունին, կերևան միայն մինչև մեջքը ու կաշխատին կախվին ժայռեն …>> (էջ 431):

Սեդան էլ՝ լինելով ընդհանրապես կանացիության խորհրդանիշ, հենց ամբողջական ծովի հետ է համեմատվում Աբեղայի համար, որը ծովը նետվելուց առաջ դիմում է ծով-Սեդային. << Դե, բաց գիրկդ, Սեդա, բաց թևերդ, ահա հույզքը ջրերուն, ահա վազքը փոթորկին, բաց թևերդ ու նորեն փարած քու խնկելի մարմնիդ, նորեն շունչդ շնչիս, ալիքներուն մեջեն, անցնիմ այն նոր ու մեծ անծանոթին, նոր գոյության ու նոր կյանքին, ան, որ խոստացեր ես ինծի: Բաց գիրկդ, Սեդա…>> (էջ 433):

Այսինքն պոեմում կինը և կյանքը զուգահեռվել են, կնոջ վայելքը և կյանքի վայելքը նույնացվում են, կինը դարձել է աշխարհիկ կյանքի խորհրդանիշ:

Երբեմն քննադատները հեթանոսական գրականության մեջ տեսնում են զուտ կրոնների հակադրում: Սակայն սա միակողմանի մոտեցում է: Շարժումը դիմում է հեթանոսությանը ոչ նրա համար, որպեսզի այն վեր դասի քրիստոնեությունից, այլ պարզապես պետք է հետ բերել հեթանոսական ժամանակների այն լավ գծերը, որոնք իրենց ժամանակում ևս ցանկալի է տեսնել: Նրանց համար կրոնի քննությունը նպատակ չէ, այլ միջոց: Ինչպես իրենք են փաստում «Արուեստը խենդութիւն մըն է, եւ իբր այս, ան կը մնայ վեր յեղափոխութիւններէ եւ յետաշրջականութիւններէ: Ինքն իսկ ըլլալով կրօնական մոլեռանդութիւն մը, վե՛ր է նաեւ ամէն կրօնքէ[19]»:

Խ. Վարդանյանը Վարուժանի պատկերած հեթանոսությունը կապում է բնության և բնական կյանքի հետ: Այս առումով քրիստոնեության հետ համեմատությունը բերում է այն գաղափարին, որ քրիստոնեությունը կտրված է իրական կյանքից «Վարուժանը կեղծին ու անբնականին հակադրում էր իր կերտած բնական-հեթանոս պատկերները՝ որպես կյանքում ապրված և ապրող երևույթներ: Նա խորապես համոզվել ու զգացել է,

[19] https://groghutsav.am/2022/04/21/%D5%B4%D5%A5%D5%B0%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BD-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8

թե որքան մեծ կենսական ուժ ունեն բնության աստվածացման հնագույն լեգենդները, և դրանց դիմաց ինչպես անհեթեթ են քրիստոնեական «հրաշքները» և հրաշապատումներ[20]»:

«Հեթանոս երգերը» կազմված է երկու բաժնից՝ «Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ»: Եթե առաջինը նվիրված է հեթանոսությանը, հեթանոսական ուժին ու առնականությանը, ապա երկրորդը պատկերում է քրիստոնեությունը, տառապանքներ և թուլություններ:

«Խաչված Հիսուս» բանաստեղծության մասին Պարույր Սևակը գրում է. «Կարծեք թե, որոշ իմաստով, բանաստեղծը դժգոհ է Հիսուսից, կարծեք թե բանաստեղծին մահու չափ հոգնեցրել է նա իր կրավորական պատգամներով և իր իսկ կյանքի օրինակով»: Եվ իրոք, այստեղ ոչ այնքան խնդրանք կա Քրիստոսից, որքան նրան ուղղված մեղադրանք: Բերենք մի հատված բանաստեղծությունից.

Մահապա՛րտ Հիսուս.

Դուն, որ բևեռված ոտքեր ունեցար՝

Գըթա ոտքերուս.

Արյուն սըրսկելով թափառեցան հար,

Ավերակներու եղինջներուն մեջ[21]:

Ռուբեն Սևակը, որ հակված էր հեթանոսական շարժմանը, «Զանգակներ, զանգակներ...» բանաստեղծության մեջ իր բողոքն է արտահայտում քրիստոնեության թուլություններից.

Արդ՝ ո՞ւր եք, չքնաղ խոստումներ Խաչին,

Եղբայրության զուր բարբառներ, ո՞ւր եք,

Կրակ կը փսխե հողն ամենուրեք,

Գետերն արյունով, դիակո՛վ կ'ուռչին…

Ու կիյնա այն, որ կը ծնկե ահով,

Զի թուրն ավելի արդար է Խաչեն,

[20] Վարդանյան Խ., Դանիել Վարուժանի «Հեթանոս երգերի» գնահատման շուրջ, Եր, 1987, էջ 84:
[21] Վարուժան Դ., Երկեր, Եր., 1984, էջ 518:

Չի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,

Անոնց, որ կ'ապրին ուրիշի մահով…

Որովհետև դեռ հեռու է օրն այն,

Երբ գայլն ու գառնուկ սիրով արածին…

Թե ապրիլ կ'ուզե գառը նորածին `

Պետք է իր ակռան սրե լռելյայն...

Քրիստոնեություն-հեթանոսություն հակադրությունն է արտահայտվում նաև Լ. Շանթի «Հին աստվածներ» պոեմում, ընդ որում, հեթանոսությունը ներկայացվում է որպես <<կյանքի>>, <<մարմնի>>, հզորի կրոն, որն ընդունում է բոլոր վայելքները, իսկ քրիստոնեությունը որպես աշխարհաթողության, <<հոգու>>, մարմնապես թույլի կրոն.

ԾԵՐՈՒՆԻՆ – Եկեղեցի՞, ինչ հիմար լեզու կխոսիս: Ձարդվածներու ու խաչվածներու տեղ չէ հոս, հանգիստ եղիր: (էջ 405)

Այնինչ հեթանոսները պայքարին և բնազդներին են հակված, ինչպես՝

ԿՈՂՔԻ ԱՂՁԻԿԸ - Կեցցե կռվողը:

ԴԵՄԻ ՁՈՐԱԿԱՆԸ - Կեցցե գեղեցկությունը:

Վահան Թեքեյանի «Սուրբ բարկությունը» բանաստեղծության մեջ քրիստոնեության հեզության քարոզից բողոքն է արտահայտվում:

Գառնուկներուն համբերությունը հատավ ա՛լ.

Երբեն ի վեր և մինչև ե՞րբ գառնուկ ըլլալ...

Տաճարներուն աղավնիներն ալ սրբազոհ

Կորագլուխ իրենց բախտեն եղան դժգոհ...

Եվ ճնշվածները բողոքում են իրենց թույլ, անզոր կարգավիճակից, քրիստոնեության՝ մյուս այտը թշնամուն պարզելու կոչերից, այլ ցանկանում են նրան տալ համարժեք պատասխան.

Ո՛վ հեղգությունը արդարոց և հին սրբոց.

Հերի՛ք, որչափ դահճին ձեռքերը պագինք մենք.

Մեր կարգին մենք ալ արդ դահիճ ըլլալ կուզենք...[22]

Այսպես, հեթանոսական գրական շարժումը ուղղված չէր քրիստոնեության դեմ, այլ քրիստոնեության բերած այն գաղափարներն էր մերժում, որոնք սերմանում էին ենթարկվելու, հեզության գաղափարները: Իսկ սա ստեղծված հասարակական վիճակում ազգին տանում էր կործանման: Այլ էր հեթանոսության պարագայում, որով բանաստեղծները կարող էին քարոզել համազգային պայքար, մաքառում հանուն ազատության:

[22]Թեքեյան Վ., Հատընտիր, Եր., 1970, էջ 94 ;

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հեթանոսական գրական շարժումը առաջ եկավ արևմտահայ մտավորականների շրջանում, նրանք հեթանոսությունը ընկալեցին որպես հայոց համազգային վերազարթոնքի ուղի: Շարժումը ուղղված էր ազգային խնդիրների լուծմանը:
- Համազգային արթնացման, հասարակությանը իրենց կողմը գրավելու համար հեթանոսական շարժման գործիչները հրատարակեցին «Նավասարդ» և «Մեհյան» հանդեսները:
- Հեթանոսական գրականության մեջ չկա կրոնների հակադրություն, այլ դրանց ընտրովի հատկանիշների: Հեթանոսականները դեմ էին ոչ թե քրիստոնեությանը, այլ հնազանդության քարոզին:
- Հեթանոս գրականության պատկերման հիմնական ամենակարևոր երևույթներն են ուժը ու գեղեցիկը: Ուժի դրսևորում է առնականությունը, պայքարը, ընդվզումը անարդարության դեմ: Գեղեցիկը դրսևորվում է կնոջ պատկերման մեջ, որը խորհրդանշում է նաև ընդհանրապես կյանքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գաբրիելյան Վ.., Դանիել Վարուժան, Եր., 1978:
2. Դանիելյան Ս., Հեթանոսական գրական շարժման պատմությունից, Եր., 1988:
3. Դանիելյան, Ս., «Մեհյան» հանդեսի գրական հավատամքը Լրաբեր, 1980:
4. Թամրազյան Հր., Պոեզիան պատմության քառուղիներում, Եր, 1971:
5. Թեքեյան Վ., Հատընտիր, Եր., 1970:
6. Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հատոր 6, 1976:
7. Սարգսյան Գր., Վարուժանի ստեղծագործական կյանքը, Եր., 1947:
8. Սրապիոնյան Ս, հրավերքի երգն ու մաքառման խորհուրդը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (65), Երևան 1988թ:
9. Վարդանյան Խ., Դանիել Վարուժանի «Հեթանոս երգերի» գնահատման շուրջ, Եր, 1987:
10. Վարուժան Դ., Երկեր, Եր., 1984:
11. https://groghutsav.am/2022/04/21/%D5%B4%D5%A5%D5%B0%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BD-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8/